

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 15.09.2020թ. թիվ 2011617520 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<< 14 >> 10 2020թ. 7-13- 12033

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով էլեն Արզումանյանի ՄԴ/138455-20-20 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Տերյան փողոցի 50 շենքի 6 բնակարանի բնակիչ էլեն Արզումանյանը դիմումով իր անհամաձայնությունն է հայտնել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 15.09.2020թ. թիվ 2011617520 որոշմանը՝ նշելով, որ հանդիսանում է << Արտաքին գործերի նախարարության աշխատակից, ինչպես նաև նշված հատվածը նախատեսված է ԱԳՆ աշխատակիցների տրանսպորտային միջոցների կայանման համար , որի մասին տեղեկացնում է փակցված ցուցանակը: Նշել է նաև նշված հատվածում բոլոր կայանված տրանսպորտային միջոցները կայանում են նույն դիրքով՝ երթևեկելի մասի եզրին ոչ զուգահեռ, հաշվի առնելով կայանատեղիի սահմանափակ լինելու հանգամանքը:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ թիվ 2011617520 որոշումն ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հաղվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

<< կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 80-րդ կետի համաձայն՝ տրանսպորտային միջոցը տեղակայել թույլատրվում է երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով՝ բացառությամբ այն տեղերի /երթևեկելի մասի տեղային լայնացում/, որտեղ գծանշմամբ թույլատրված են տրանսպորտային միջոցների դասավորման այլ ձևեր:

Վիճարկվող որոշման հիմքում դրված տեսանյութը փաստում է, որ դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցը կանգառ է կատարել երթևեկելի մասի եզրին ոչ զուգահեռ, ինչը վերը նշված նորմի խախտում է:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 15.09.2020թ. թիվ 2011617520 որոշմամբ ամրագրված իրավախախտումն արձանագրած տեսանյութի լրացուցիչ ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ իրավախախտման փաստը Երևան քաղաքի Խորենացի-Բեյրութ-Իտալիա-Վազգեն Սարգսյան փողոցների խաչմերուկի հատվածում սկսվում է արձանագրվել 11:57:32-րդ վայրկյանից և դադարում 11:58:50-րդ վայրկյանին՝ տևելով 78 վայրկյան, իսկ <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> << օրենսգրքի 124-րդ հոդվածի 39-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 21-րդ և 25-րդ մասերով (միայն կանգառ կատարելու մասով) նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ կանգառը կատարվել է **միայն ուղևորների նստելու կամ իջնելու նպատակով, չի գերազանցել մեկ րոպե ժամանակահատվածը, և դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել**, հետևաբար առկա չէ իրավական որևէ հիմք դիմումատուի արարքը նվազ նշանակություն ունեցող գնահատելու համար:

Տեսանյութը փաստում է նաև, որ կանգառը չի կատարվել միայն ուղևոր նստելու կամ իջնելու նպատակով, գերազանցել է **սահմանված մեկ րոպե** ժամանակահատվածը, ուստի իրավախախտումը նվազ նշանակություն ունենալ չի կարող:

Այսպիսով, հիմնավորվել է, որ դիմումատուին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վերը նշված որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> << օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 15.09.2020թ. թիվ 2011617520 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել << վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել էլեն Արզումանյանին:



Ե. Կարապետյան